600.0338.04.09.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2018 թվականի №338Լ
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
4 սեպտեմբերի 2018թ.

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի սեպտեմբերի 4-ի №338Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 122-րդ հոդվածի հիման վրա գործող ինքնավար մարմին է, որը <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացնում է կարգավորում հանրային ծառայությունների ոլորտում:

2. Հանձնաժողովը ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Հանձնաժողովը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Հանձնաժողովի անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
2) ռուսերեն՝ Комиссия по регулированию общественных услуг Республики Армения.
3) անգլերեն՝ Public Services Regulatory Commission of the Republic of Armenia.
4) ֆրանսերեն՝ Commission de régulation des services publics de la République d'Arménie:

5. Հանձնաժողովն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Հանձնաժողովը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Հանձնաժողովի կառուցվածքում ընդգրկվում են Հանձնաժողովի նախագահի, անդամների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, Հանձնաժողովի նախագահի խորհրդականի, օգնականի, Հանձնաժողովի անդամների, գլխավոր քարտուղարի օգնականի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները:

7. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Սարյան 22:

8. Հանձնաժողովի պաշտոնական համացանցային կայքն է՝ http://psrc.am/:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Հանձնաժողովի նպատակներն են՝ Հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ՝

1) հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ կարգավորվող անձինք) շահերը.

2) կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ.

3) նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

10. Հանձնաժողովի խնդիրներն են՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում կարգավորման համապատասխան մեխանիզմների ստեղծումը և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Հանձնաժողովն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրավասու է իրականացնել հետևյալ լիազորությունները՝

1) Էներգետիկայի բնագավառում <<Էներգետիկայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝

ա. սահմանում է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի և շուկայի կանոններով սահմանված համակարգային ծառայությունների սակագները.

բ. սահմանում է սպառողներին վաճառվող բնական գազի, ջերմային էներգիայի, երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի սակագները, ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից սպառողներին ծառայությունների մատուցման սակագները.

գ. իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնում է լիցենզավորում՝ տրամադրում է լիցենզիաներ, երկարաձգում է դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպում, կասեցնում և դադարեցնում դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանում լիցենզիաների պայմանները, վերահսկում դրանց կատարումը և կիրառում <<Էներգետիկայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուժանքները.

դ. հաստատում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ

դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը.

ե. սահմանում է ջերմային էներգիայի, ինչպես նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները.

զ. հաստատում է շուկայի կանոնները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությամբ.

է. սահմանում է լիցենզավորված անձանց միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը, իր սահմանած կարգով գրանցում էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև ներկրման և արտահանման պայմանագրերը՝ <<Էներգետիկայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն.

ը. սահմանում է լիցենզավորված անձանց և սպառողների միջև կնքվող՝ էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը և ապահովում դրանց ներդրումը.

թ. կազմակերպում է քննարկումներ՝ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման հետ կապված, քննարկումների արդյունքով կայացնելու որոշումներ և (կամ) տալու պարզաբանումներ.

ժ. <<Էներգետիկայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի, լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման, Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների ու տեղեկությունների հավաստիության ուսումնասիրության նպատակով իր սահմանած կարգով իրականացնում է լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում).

ժա. լիցենզավորված և լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող անձանցից պահանջում է բոլոր այն տեղեկություններն ու տվյալները, որոնք անհրաժեշտ են լիցենզիաների տրամադրման, դրանց պայմանների վերահսկման, սակագների սահմանման, տարաձայնությունների և այլ հարցերի քննարկման համար.

ժբ. սահմանում է լիցենզավորված անձանց կողմից սպառողների սպասարկման որակի նվազագույն պահանջները.

ժգ. <<Էներգետիկայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գրանցում է պայմանագրերը.

ժդ. սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ՝ կարգավորմանը վերաբերող հաշվետվությունները ներկայացնելու համար.

ժե. իր սահմանած ձևերով և կարգով լիցենզավորված անձանցից ստանում է լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվություններ, այլ տեղեկատվություն և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր, կատարում համապատասխան վերլուծություններ.

ժզ. համաձայնություն է տալիս լիցենզավորված անձանց ներկայացրած ներդրումային ծրագրերին՝ ապագա սակագներում դրանց ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով.

ժէ. ապահովում է իր ընդունած որոշումների կիրարկումը և մեկնաբանումը.

ժը. համագործակցում է էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հետ՝ էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման, էներգետիկայի բնագավառում միջպետական համագործակցության ընդլայնման ուղղությամբ.

ժթ. հաստատում է լիցենզիա ունեցող անձանց մշակած էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերը՝ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությամբ.

ժի. հաստատում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի մշակած՝ էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշները՝ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությամբ.

իա. սահմանում է լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառման վարման լրացուցիչ պահանջներ.

2) ջրային ոլորտում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն՝

ա. սահմանում է ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները և դրանց հաշվարկման (մշակման) մեթոդիկաները.

բ. ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում իրականացնում է լիցենզավորում՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան իր հաստատած լիցենզավորման կարգի համաձայն.

գ. վերահսկում է ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում իր տրամադրած լիցենզիայի պայմանների կատարումը, իրականացնում է լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում) և կիրառում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով սահմանված տուժանքները.

դ. սահմանում է խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները.

ե. սահմանում է լիցենզավորված անձանց և բաժանորդների միջև կնքվող՝ խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը կամ պարտադիր պայմանները.

զ. իր սահմանած կարգով կազմակերպում է քննարկումներ Հանձնաժողով ուղղված հարցադրումների, բողոքների վերաբերյալ և քննարկումների արդյունքով կայացնելու որոշումներ.

է. լիցենզավորված անձանց համար սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ՝ կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման նպատակով.

ը. իր սահմանած ձևերով և կարգով լիցենզավորված անձանցից ստանում է լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվություններ, այլ տեղեկատվություն և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր, կատարում համապատասխան վերլուծություններ.

թ. սահմանում է սպառողներին մատուցվող ծառայությունների որակին (սպասարկման որակին) ներկայացվող նվազագույն պահանջները.

ժ. ապահովում է իր ընդունած որոշումների կիրարկումը, կատարման նկատմամբ հսկողությունը և մեկնաբանումը։

3) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտում ապահովում է մրցակցություն հետևյալ եղանակներով՝

ա. ապահովում է մատուցված ծառայությունների, դրանց հարակից ենթակառուցվածքների ընտրության, գների և որակի առավել օգտավետությունը վերջնական օգտագործողների համար.

բ. իր գործունեության ընթացքում բացառում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցի ոլորտում մրցակցության որևէ աղավաղումը.

գ. խրախուսում է արդյունավետ ներդրումները ենթակառուցվածքներում և խթանում նորարարությունը.

դ. խրախուսում է ռադիոհաճախականությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների և համարային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ ապահովելով դրանց արդյունավետ կառավարումը.

4) կարգավորում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, որի ապահովման համար՝

ա. դասակարգում է ծառայությունները և (կամ) ենթակառուցվածքները.

բ. ամրագրում է չափանիշներ և ընթացակարգեր ցանցի լիցենզիաների, համարի և կոդերի զբաղեցման, հաճախականության օգտագործման թույլտվությունների համար դիմելու, դրանց տրամադրման, փոփոխման, կասեցման և դադարեցման համար.

գ. ամրագրում է համընդհանուր ծառայություններ մատուցելու պարտավորությունները.

դ. սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով իրականացնում է ստուգումներ և աուդիտ՝ օրենսդրության, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով.

ե. ապահովում է արդար և արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում.

զ. մշակում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցումը կարգավորող կանոնակարգեր.

է. սահմանում և կիրառում է դրույքաչափերը կարգավորող կանոններ.

ը. սահմանում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և ծառայություններ մատուցողների համար գործունեության որակի որոշակի չափանիշներ.

թ. իրավասու մարմնին առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ.

ժ. սահմանում է հաշվետվությունների ներկայացման պահանջներ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և ծառայություն մատուցողների համար.

ժա. կարգավորման ենթակա անձանց համար սահմանում է արխիվների պահպանման ստանդարտներ.

ժբ. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու դեպքում կիրառում է պատժամիջոցներ, այդ թվում՝ տույժեր և տուգանքներ, իսկ համապատասխան դեպքերում՝ փոփոխում, կասեցնում է լիցենզիան կամ թույլտվությունը կամ դատարան է ներկայացնում դադարեցման դիմում: Հանձնաժողովը պարտավոր է հանրային խորհրդակցությունից հետո հաստատել կանոններ և կարգեր՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ.

ժգ. կիրարկում է կանոններ և կանոնակարգեր, ուսումնասիրում և վերահսկողության ենթարկում կարգավորման ենթակա անձանց գործունեությունը.

ժդ. տնօրինում է սահմանափակ ռեսուրսները, այդ թվում՝ իր տնօրինմանը ենթակա ռադիոհաճախականությունների տիրույթը, համարները և արբանյակային ուղեծրի հատվածները.

ժե. անհարկի փոխադարձ ֆինանսավորումը կանխելու, փոխկապակցման արդարացի գները հաշվարկելու, համընդհանուր ծառայությունների արժեքն ու վճարները սահմանելու նպատակով ներդնում և կիրառում է գերիշխող օպերատորի կամ ծառայությունների մատուցման մեջ գերիշխողի ծախսերի հաշվարկի և բաշխման մեթոդաբանությունը: Այդ մեթոդաբանությունը կարող է փոփոխվել, միայն եթե դրանք կնպաստեն մրցակցությանը կամ կընդլայնեն վերջնական օգտագործողների ընտրության հնարավորությունը.

ժզ. հաստատում է փոխկապակցման օրինակելի առաջարկները՝ դրանցից յուրաքանչյուրի՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխանությունը պարզելուց հետո.

ժէ. ապահովում է, որպեսզի վերջնական օգտագործողները հավասար սկզբունքներով առավելագույնս հնարավորություն ունենան օգտվելու օպերատորների և ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող վարձակալված գծերից.

ժը. լուծում է վեճեր գերիշխող օպերատորի և ցանկացած այլ օպերատորի, ծառայություններ մատուցողի և վերջնական օգտագործողի, ինչպես նաև ծառայությունների մատուցման մեջ գերիշխողի և վերջնական օգտագործողի միջև.

ժթ. միջամտում և լուծում է վեճեր՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված իրավասության շրջանակներում.

իա. մշակում է այնպիսի մեթոդաբանություն, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի որոշել գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներին կամ ծառայություններ մատուցողներին, ինչպես նաև ընդունում է այդ օպերատորների կամ ծառայություններ մատուցողների գործունեությունը կարգավորող հատուկ կանոններ (այդ թվում՝ հատուկ կանոններ համընդհանուր ծառայությունների մասին) .

իբ. մշակում է վերջնակետային սարքավորումների օգտագործումը և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերին դրանց միացումը կարգավորող կանոնակարգեր.

իգ. հաստատում է Հայաստանի Հանրապետության համարագրման պլանը՝ այն հրապարակելով և առանց խտրականության տրամադրելով կարճ համարներ և կարճ կոդեր՝ անհատական կամ խմբաքանակով.

իդ. ստեղծում և հրապարակում է ռադիոհաճախականությունների տիրույթն օգտագործելու թույլտվություն ունեցող անձանց գրանցամատյան, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության անվտանգությանը.

իե. կատարում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ.

իզ. իրավասու մարմինների պահանջով աջակցում է վերջիններիս «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասու մարմինների գործառույթների կատարման հարցում.

իէ. ընդունում է հանրային կամ ազգային անվտանգության շահերից բխող հատուկ կանոններ, կարգեր.

իը. սահմանում է համարների տեղափոխելիության ծառայության վերաբերյալ կանոններ.

5) ռադիոկապի առնչությամբ ռադիոհաճախականությունների տիրույթի՝ իրեն հատկացված մասից տրամադրում է ռադիոհաճախականություններ որոշակի նպատակների համար: Այդ նպատակով՝

ա. հրապարակային ծանուցումից և դիտարկումների ստացումից հետո կազմակերպում է ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ և նպատակային օգտագործում,

բ. աջակցում է իրավասու մարմնին միջազգային կազմակերպություններում և ստանդարտներ սահմանող մարմիններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնելու գործում,

գ. պլանավորում և համակարգում է ռադիոհաճախականությունների տիրույթի՝ իրեն հատկացված մասի օգտագործումը,

դ. սահմանում է ոչ կառավարական ռադիոկանչերի նշանների հաղորդման ընթացակարգ՝ հնարավորինս համաձայնեցնելով դրանք Հեռահաղորդակցության միջազգային միության կոնվենցիային կից ռադիոկանոնակարգերին,

ե. դադարեցնում է ռադիոհաճախականությունների տիրույթի՝ առանց թույլտվության օգտագործումը, բացառությամբ եթե այն օգտագործում են Հայաստանի Հանրապետության պետական (կառավարական) մարմինները,

զ. ընդունում է սիրողական ռադիոօպերատորների թույլտվության տրամադրման կարգ և վերջիններիս կողմից՝ տվյալ նպատակով հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը կարգավորող կանոններ.

6) ընդունում է օրենքներին, հանրային շահին համապատասխանող, հիմնավորված, արդար և հրապարակային որոշումներ՝ սահմանելով դրանց իրականացման ընթացակարգեր:

7) Հանձնաժողովն իրականացնում է նաև «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

12. Հանձնաժողովը չի կարգավորում (լիցենզիաներ չի տրամադրում և սակագներ չի սահմանում) «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը.

13. Հանձնաժողովն իր լիազորությունները իրականացնում է օրենքներով ամրագրված գործիքակազմի սահմաններում, այդ թվում՝

1) ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական կամ ներքին որոշումներ, տալիս է պաշտոնական պարզաբանում ոլորտային օրենսդրական ակտերի վերաբերյալ,

2) ապահովում է իր ընդունած որոշումների կիրարկումը և կատարման նկատմամբ հսկողությունը.

3) հրավիրում և անցկացնում է նիստեր և քննարկումներ՝ հնարավորություն ընձեռելով շահագրգիռ անձանց, Հայաստանի Հանրապետության կառավարության, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնի և հասարակության ներկայացուցիչներին սահմանված կարգով մասնակցել դրանց, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով.

4) եզրակացություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի վերաբերյալ, մասնակցում է ոլորտային օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի լրամշակման աշխատանքներին.

5) իրավասու պետական մարմիններից, կարգավորվող անձանցից, լիցենզիա ստանալու համար դիմած անձանցից պահանջում է իր գործառույթների կատարմանն առնչվող տեղեկատվություն.

6) համագործակցում է Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ, նրանց հետ իր իրավասությանն առնչվող հարցերի շրջանակներում կնքում է հուշագրեր, համագործակցության մասին այլ համաձայնագրեր, այլ փաստաթղթեր:

(6-րդ ենթակետը լրաց. 22.02.19 N38Լ)

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում (կառավարում) է Հանձնաժողովի գործունեությունը, ապահովում է ներքին աուդիտի համակարգի առկայությունն ու գործունեությունը:

15. Հանձնաժողովի նախագահի պաշտոնը համարվում է ինքնավար պաշտոն:

16. Հանձնաժողովի նախագահին անմիջական հաշվետու են Հանձնաժողովի անդամները, գլխավոր քարտուղարը, Հանձնաժողովի նախագահի խորհրդականը, օգնականը և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

17. Հանձնաժողովի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը:

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
2) Հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգին համապատասխան համակարգում է Հանձնաժողովի անդամների կողմից համակարգվող աշխատանքների (գործունեության) իրականացումը.
3) վերահսկողություն է իրականացնում Հանձնաժողովին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.
4) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Հանձնաժողովի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
5) հաստատում է հաստիքացուցակը.
6) իր լիազորությունների շրջանակում ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր.
7) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, Հանձնաժողովի անունից ստորագրում է Հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները և պաշտոնական այլ փաստաթղթեր.
8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, ինչպես նաև վերջինիս հանձնարարականները.
9) իր լիազորությունների սահմաններում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.
10) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա

հանձնարարությամբ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը իրականացնում է նախագահին վերապահված լիազորությունները: Հանձնարարականի անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:

20. Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են ինքնավար պաշտոններ:

21. Հանձնաժողովի անդամը՝

1) անկախ է և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան.
2) համակարգում է աշխատանքները (գործունեությունը) իրեն հանձնարարված բնագավառներում.
3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները, ապահովում է նրա կողմից նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Հանձնաժողովի նախագահին.
4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.
5) իր համակարգման լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, նշագրում Հանձնաժողովի որոշումներ և այլ փաստաթղթեր.
6) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.
7) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

22. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն տասը տարվա աշխատանքի փորձառություն ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, իսկ մյուսները՝ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգավորվող ոլորտներից որևէ մեկում՝ սույն կետով նախատեսված ժամկետով աշխատանքային ստաժ: Կարգավորվող ոլորտի ստաժ է համարվում նաև այդ ոլորտում պետական կառավարում կամ կարգավորում իրականացնող մարմիններում կամ այդ ոլորտում սպառողների հետ կապերի գծով աշխատանքային ստաժը:

23. Հանձնաժողովը գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ ձեռք է բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով:

24. Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:

25. Գլխավոր քարտուղարին անմիջական հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

26. Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար:

27. Գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) իր լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ, Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները, դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Հանձնաժողովի նախագահին.

3) օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հանձնաժողովին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Հանձնաժողովի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) Հանձնաժողովին ներկայացնում է առաջարկություններ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

6) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ.

7) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական և ներքին հրամաններ, տալիս հանձնարարականներ.

8) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պատրաստված, ինչպես նաև իր, Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի անդամի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

9) համակարգում է Հանձնաժողովի նիստերի, քննարկումների, խորհրդակցությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները.

10) Հանձնաժողովի նախագահին զեկուցում է ամենօրյա փոստը.

11) Հանձնաժողովի նախագահի ստորագրմանն է ներկայացնում նրա հրամանները, Հանձնաժողովի որոշումներն ու նիստերի արձանագրությունները.

12) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

13) իրականացնում է օրենքով և իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

28. Գլխավոր քարտուղարն ունի տեղակալ: Գլխավոր քարտուղարն իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին:

29. Գլխավոր քարտուղարի տեղակալը փոխարինում է գլխավոր քարտուղարին վերջինիս բացակայության ժամանակ:

30. Հանձնաժողովի նախագահի խորհրդականը՝

1) պարբերաբար Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում զեկույցներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին և առաջարկում լուծումներ առկա հիմնահարցերի վերաբերյալ.

2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնակցում է իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

3) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ և կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

4) իրականացնում է Հանձնաժողովի նախագահի այլ հանձնարարականներ:

31. Հանձնաժողովի նախագահի օգնականը՝

1) կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Հանձնաժողովի նախագահին.

2) կազմակերպում է Հանձնաժողովի նախագահի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

3) համագործակցելով Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների հետ՝ նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

4) կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունները Հանձնաժողովի նախագահի մոտ.

5) իրականացնում է Հանձնաժողովի նախագահի այլ հանձնարարականներ:

32. Հանձնաժողովի անդամի օգնականը՝

1) կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Հանձնաժողովի անդամին.

2) կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունները Հանձնաժողովի անդամի մոտ.

3) իրականացնում է Հանձնաժողովի անդամի այլ հանձնարարականներ:

33. Գլխավոր քարտուղարի օգնականը՝

1) կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում գլխավոր քարտուղարին.

2) կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունները գլխավոր քարտուղարի մոտ.

3) իրականացնում է գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականներ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

34. Հանձնաժողովի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) իրավաբանական և լիցենզավորման վարչություն.
2) հեռահաղորդակցության վարչություն.
3) սակագնային քաղաքականության վարչություն.
4) ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն.
5) *(կետն ուժը կորցրել է)*

(34-րդ կետը փոփ. 03.07.19 N250Լ, 27.11.2019 N449Լ)

35. Հանձնաժողովին աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) գործերի կառավարման վարչություն,
2) անձնակազմի կառավարման բաժին.
3) հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին.
4) միջազգային համագործակցության բաժին:

(35-րդ կետը փոփ. 03.07.19 N250Լ)

36. Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Հանձնաժողովը:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՒՅՔԸ

37. Հանձնաժողովի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանձնաժողովի տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

38. Հանձնաժողովն օրենքի և իր կանոնադրության համաձայն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

39. Հանձնաժողովի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Գնումների գործընթացը համակարգում է գլխավոր քարտուղարը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. Հանձնաժողովը վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ:

41. Հանձնաժողովի ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

42. Հանձնաժողովի ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

43. Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը, որն իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունները: